# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 887-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0454- 0017- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքում գտնվող 05-003-0454-0017- կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Ա.Մյասնիկյան փողոց, թիվ 72/1 հողամաս հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. օգոստոսի 18
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2025 թվականի N 888-Ա

## ՎՐԵԺ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ 20.07.2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 32,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վրեժ Սերյոժայի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վրեժ Սերյոժայի Սարգսյանի հետ 20.07.2023 թվականին կնքված Մադինա բնակավայրի վարչական սահմանների ներսում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 32,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել երեք տարով՝ մինչև 2028 թվականի օգոստոսի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. օգոստոսի 20

ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2025 թվականի N 889-Ա

## ԳԵՎՈՐԳ ՎՐԵԺԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ 02.08.2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 34,8479 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Գևորգ Վրեժի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Վրեժի Սարգսյանի հետ 02.08.2021 թվականին կնքված Մադինա բնակավայրի վարչական սահմանների ներսում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 34,8479 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել երեք տարով՝ մինչև 2028 թվականի օգոստոսի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2025թ. օգոստոսի 20
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2025 թվականի N 890-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջով՝ ***որոշում եմ.***

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ քաղաքացիներին տրամադրել դրամական հատուցում հետևյալ չափերով.

| Հ/Հ | Անուն, հայրանուն, Ազգանուն | Գումարը |
|---|---|---|
| 1. | Հայրապետյան Սամվել Վանիկի | 30000 դր. |
| 2. | Խոսրոյան Վարազդատ Վեմիրի | 40000դր. |
| 3. | Ենոքյան Յուլակ Ասատուրի | 50000դր. |
| 4. | Կարապետյան Ալվարդ Դիմիտրի | 50000 դր. |
| 5. | Խլղաթյան Ռուզաննա Անդրանիկի | 30000 դր. |
| 6. | Գևորգյան Ռուզաննա Մանվելի | 30000 դր. |
| 7. | Սուքիասյան Էվելինա Վարդկեսի | 30000 դր. |
| 8. | Մովսիսյան Բաղիգուլ Թորգոմի | 30000 դր. |
| 9. | Ալվանդյան Սվետա Գուրգենի | 30000 դր. |
| 10. | Սաֆարյան Հովհաննես Անդրանիկի | 80000 դր. |
| 11. | Ճռիկյան Արփինե Նորիկի | 40000 դր. |

| | | |
|---|---|---|
| 12. | Սարգսյան Անահիտ Հայաստանի | 25000 դր. |
| 13. | Ավետիսյան Գրիգոր Ջանիբեկի | 40000 դր. |
| 14. | Առուստամյան Նորիկ Վաղարշակի | 30000 դր. |
| 15. | Սարգսյան Նվեր Վաղարշակի | 40000 դր. |
| 16. | Պողոսյան Քրիստինա Կարոյի | 40000 դր. |
| 17. | Ալեքսանյան Քանաքարա Սումբատի | 45000 դր. |
| 18. | Մանուկյան Լուսինե Լյուդվիկի | 30000 դր. |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. օգոստոսի 20
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2025 թվականի N 891-Ա

## ԷԴԻԿ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ 16.08.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 177,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Էդիկ Խաչիկի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էդիկ Խաչիկի Խաչատրյանի հետ 16.08.2022 թվականին կնքված Վերին Գետաշեն բնակավայրի վարչական սահմանների ներսում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 177,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել երեք տարով՝ մինչև 2028 թվականի օգոստոսի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. օգոստոսի 20
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2025 թվականի N 892-Ա

## ԷԴԻԿ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ 16.08.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 23,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Էդիկ Խաչիկի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էդիկ Խաչիկի Խաչատրյանի հետ 16.08.2022 թվականին կնքված Վերին Գետաշեն բնակավայրի վարչական սահմանների ներսում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 23,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել երեք տարով՝ մինչև 2028 թվականի օգոստոսի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. օգոստոսի 20
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 893-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 35 ԵՎ ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԵՐԵՎԱՆՅԱՆ 35 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, 35 և քաղաք Մարտունի, Երևանյան 35 հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորումից առաջացած գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 35 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 894-Ա

### «FAST SHIFT» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԻՐԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, 33-րդ հոդվածի 2-րդ կետի, 219.1 հոդվածի և 282-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովի 20.08.2025 թվականի արձանագրությունը և նկատի ունենալով, որ վարչական իրավախախտման հետևանքները կամավոր վերացվել են՝ ***որոշում եմ.***

1. «FAST SHIFT» ՍՊ ընկերության տնօրեն Իրինա Գասպարյանի նկատմամբ 2025 թվականի օգոստոսի 5-ին հարուցված վարչական վարույթը կարճել վարչական իրավախախտման հետևանքները կամավոր վերացվելու հիմքով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ սույն որոշման մասին ծանուցել «FAST SHIFT» ՍՊ ընկերության տնօրեն Իրինա Գասպարյանին:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արտյոմ Քոչարյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 895-Ա

## «ԼԱՐԻՍԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, Ա ԹԱՂԱՄԱՍ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԼՑԱԿԱՅԱՆՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի թիվ N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Լարիսա Հարությունյան Սուրենի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր, Ա թաղամաս, 1-ին փողոց, թիվ 1/7 հասցեում գործող լցակայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն 2025 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար:

2.«Լարիսա Հարությունյան Սուրենի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145108065 հաշվի համարին վճարել 25.000 (քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 896-Ա

### «ԼԱՐԻՍԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, Ա ԹԱՂԱՄԱՍ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Լարիսա Հարությունյան Սուրենի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր, Ա թաղամաս, 1-ին փողոց, թիվ 1/7 հասցեում գործող 46 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Լարիսա Հարությունյան Սուրենի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145108065 հաշվի համարին վճարել 22000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 897-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 15-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-027-0042-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 15-րդ փողոց, թիվ 33 հասցեում գտնվող 05-027-0042-0008 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները՝

0.0998 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 15-րդ փողոց, թիվ 33 հասցեն,

0.0500 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 15-րդ փողոց, թիվ 33/1 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 898-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԹԻՎ 579-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայր, Ա թաղամաս, 1-ին փողոց, թիվ 12/5 հասցեում անշարժ գույքերի նկատմամբ Լենդրուշ Վաղինակի Ղանդիլյանի, Սեդա Լենդրուշի Ղանդիլյանի և Անահիտ Գագիկի Ղանդիլյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 579-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

   1.1 որոշման նկարագրական մասը «Ղեկավարվելով» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի,» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 899-Ա

## «ԼԻԼԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԼԵՎՈՆԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Լիլիթ Մանուկյան Լևոնի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 4 հասցեում գործող 83 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Լիլիթ Մանուկյան Լևոնի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145106069 հաշվի համարին վճարել 28000 (քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎՀԵՅԱՆ**

2025թ. օգոստոսի 21
ք. Մարտունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2025 թվականի N 900-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-082-0001-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,001232 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.04.2015 թվականի թիվ 412-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրում գտնվող 05-082-0001-0007 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0,001232 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ**

2025թ. օգոստոսի 22
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2025 թվականի N 901-Ա

### ՄԱՐԱՏ ՊԵՏՐՈՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 05-045-0046-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1236 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի բնակիչ Մարատ Պետրոսի Պողոսյանի 15.08.2025 թվականի համաձայնագիրը և Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 21-ի թիվ 112-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի բնակիչ Մարատ Պետրոսի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 05-045-0046-0002 կադաստրային ծածկագրով 0.1236 հա մակերեսով հողամասը (հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 2) նվիրատվությամբ ընդունել Մարտունի համայնքի սեփականություն՝ բժշկական ամբուլատորիա կառուցելու նպատակով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականը ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հողամասն ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ

2025թ. օգոստոսի 22
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2025 թվականի N 902-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ 05-003-0499-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի թիվ 412-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը և Դավիթ Համլետի Դավթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Նարեկացու փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 1 հասցեի 05-003-0499-0027 կադաստրային ծածկագրով խառը կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ

2025թ. օգոստոսի 22
ք. Մարտունի